654 Ով իմ Արարիչ երկրի, երկնքի,

1. Ով իմ Արարիչ երկրի, երկնքի,
Դու՝ ինձ ստեղծող, հոգի, շունչ տվող,
Անսահման, անհուն, ամենուր եղող,
Տուր ինձ այն հոգին՝ Քեզ միշտ տենչացող:

Որ երկրպագեմ Քո սուրբ անունը
Իմ սրտի մեջ, Տե՛ր, միշտ և ամենուր,
Որ փառաբանվի Քո մեծ անունը
Իմ հոգում, ո՛վ Տեր, միշտ և ամենուր:

2. Ով իմ Տեր, Արքա ողջ տիեզերքի,
Ամեն բանի մեջ օգնող ու պահող,
Ճշմարիտ, արդար, անաչառ եղող,
Տուր ինձ այն հոգին՝ բարի, կամեցող:

3. Ով իմ երկնավոր Հայր, հավետ բարի,
Դու՝ հանցանքներս տեսնող ու ներող,
Գթած, ողորմած, ամենակարող,
Տուր ինձ այն հոգին՝ Քեզնից միշտ խնդրող: